 թողում, թող. զենում, զեն.  
 ընում, լն'ց. և այլք այսպիսիք  
 թէ ներգործականք թէ Ըմիջա  
 կանք.

Վոյնականքն և կողմնականքն ճա  
 նաչին ևս 'ի կատարելումն սահմա  
 նականին. զի շատքն 'ի կողմնա  
 կանաց՝ 'ի կատարելումն սահմա  
 նականին առանց ցոյի ձևանան.  
 Ուն՝ Ըծեմ ը ածի, ածեր, էած.  
 Ըերեմ ը բերի, բերեր, բբեր.  
 Գտանեմ ը գտի, գտեր, եգիտ.  
 Գանեմ ը եգի, եգեր, եգ.  
 Լըն յոյժ սականէք են որք ցոյիւ

լինին: Ու, Ռանամ թացի, բացեր, եբաց: Նուամ լցի, լցեր, էլից. և այլք սակաւք:

Ռայց՝ կրաւորականքն և կրաւորակերպքն թէ և ոչ ունիցին ըզցոյ ՚ի կատարելումն, մի՛ կոչեսցին կողմնականք. զի հրամայականք նոցին ՚ինոյնականացն են՝ յարմար ներկային իւրեանց: Բայ ՚ի միոյս՝ նատիմ, նիստ: Ասացի յարմար ներկային իւրնց, զի թէպէտ և բայս դնեմ, լինի՛ իւր, իբր զնոյնական, բայց ոչէ յարմար ներկային իւրում: զի նոյնական ներկայն՝ էմ, պարտի ունիլ զհրամայականն էա, և ոչ իւր: Վսորոյ ասի և այս կողմնական:

Սա և մեծ մասն կողմնականաց՝ ՚ինոյն կտրելումն սահմանականին՝ ՚ի յերրորդում գիմի եզականին՝ նախադրեն ինքեանց զտառն՝ է, կամ, է: Ու, Ածեմ լածի, ածեր, էած: Թո ղում թողի, թողեր, էթող, և այլ:



Լ՛՛՛ յոյժ սակա՛ւք են որք առնց  
 սոցին լինին : ու՛յ՛ Տամբերեմ |  
 Տամբերի, Տամբերեր, Տամբեր :  
 Տամբառնամ || Տամբարձի, Տամ  
 բարձեր, Տամբարձ : և այլք սկ՛ւք :  
 Որոց և հրամայականն՝ նոյն երդ  
 դէմն է :

Լ՛՛՛ արդ՛ ըստ զանազանուէ կա  
 տարելոյ սահմանականին, և ներ  
 կայի հրամայականին՝ զանազան  
 բայք գտանին զանազան ձևս ու  
 նօղք : զորոց աստէն սակա՛ւուք  
 նշանակեացուք :

Ընայ Պատկանոցս Ընանին Կերպին :

Կոյնայն Կերպործայնս :

|        |         |         |
|--------|---------|---------|
| Ըյրեմ  | այրեցի  | այրեա՛  |
| Ըուժեմ | բուժեցի | բուժեա՛ |
| Գովեմ  | գովեցի  | գովեա՛  |
| Գասեմ  | գասեցի  | գասեա՛  |
| Լղժեմ  | եղժեցի  | եղժեա՛  |

|         |          |          |
|---------|----------|----------|
| Օրկեմ   | զրկեցի   | զրկեա՛   |
| Բնտրեմ  | ընտրեցի  | ընտրեա՛  |
| Թո՛ւնեմ | թո՛ւնեցի | թո՛ւնեա՛ |
| Ժտեմ    | ժտեցի    | ժտեա՛    |

Եւ այլք յոյժ բիւլք սոյնս  
 Էմ, էյի, էա եզերեալք:

Ի սոյն յե Վոյնախտ Վերսիլայանս:

|       |        |         |
|-------|--------|---------|
| Գիմեմ | գիմեցի | գիմեա՛  |
| Գոչեմ | գոչեցի | գոչեա՛  |
| Ննջեմ | ննջեցի | ննջեա՛  |
| Հսկեմ | հսկեցի | հսկեա՛  |
| Ճեմեմ | ճեմեցի | ճեմեա՛  |
| Յամեմ | յամեցի | Ե այլք: |

Վոյնախտ Վերսիլայանս:

Որոց լինի ներկայն, էմ. կտրըն, ի.  
 Ե հրամայականքն զանազանք:

Ու, լ՛ծեմ, ածի, ա՛ծ: Բերեմ  
 բերի, բեր: Հանեմ, հանի, հա՛ն:  
 Լ՛րկանեմ, արկի, ա՛րկ: Հարկա  
 նեմ, հարի, հա՛ր: Վտանեմ, գը  
 տի, գիտ: Հատանեմ, հատի, հա՛տ:

Մ ու ծ ա ն ե մ , մ ու ծ ի , մ ո՛յ ծ : Լ ու  
ծ ա ն ե մ , լ ու ծ ի , լ ո՛յ ծ : Յ ու ը ց ա ն ե մ  
ց ու ը ի , ց ո՛յ ը : Լ ու ը ց ա ն ե մ , լ ու ը ի ,  
լ ո՛յ ը : և այլ ք ս ոյ ն պ ի ս ի ք :

Պ ա ս յ ն չ ե Կ ո շ ՚ հ ա չ ա ն Ը ն գ մ Ղ ա չ ա ն ք :  
Լ յ լ ա ն ե մ , ե լ ի , ե լ շ : Մ տ ա ն ե մ ,  
մ տ ի , մ ո՛ւ տ : Լ ն ջ ա ն ե մ , ի ջ ի , է ջ :  
Լ ն ց ա ն ե մ , ա ն ց ի , ա ն ց : և այլ :

Լ յ ը ի ս ր է ս ա չ ե Կ ո շ ՚ հ ա չ ա ն Ը ն գ մ Ղ ա չ ա ն ք :  
Լ ս ե մ , լ ո՛ւ ա յ , լ ո՛ւ ր : Ճ ա ն ա ջ ե մ ,  
ծ ա ն ե ա յ , ծ ա ն ի ր :

Պ ա ս յ ն ո ճ Ը ն գ մ Ղ ա չ ա ն ք :

Յ ա ու ն ե մ , յ ա ը ե ա յ , ա ը ի՛ : Մ ե  
ղ ա ն ջ ե մ , մ ե ղ ա յ , մ ե ղ ի ր :

Լ ծ ա ն ց ա չ ա ն Ը ն գ ու ը ծ ա չ ա ն ք :

Պ ա ը ղ ու ը ց ա ն ե մ , ձ ու ը ի , դ ա ը ձ ո՛ :

Յ ա ը ու ը ց ա ն ե մ , ը ու ը ի , յ ա ը ո՛ :

Ս ա ն ու ը ց ա ն ե մ , ն ու ը ի , ծ ա ն ո՛ :

Կ ե ց ու ը ց ա ն ե մ , ց ու ը ի , կ ե ց ո՛ :

Լ պ ը ե ց ու ը ց ա ն ե մ , ց ու ը ի , ը ե ց ո՛ :  
և այլ ք Բ ա ղ ու մ ք :

Բայր Պարիսեօք Լճի՛ր Կերպին :

Նոյնական Ներգործական :

Լո՛ւանամ , լո՛ւացի , լո՛ւն :

Նոյնական Բնորոշական :

Պնամ , գնացի , գնա՛ն : Սնամ ,  
մնացի , մնա՛ն : Լողամ , լողացի , զա՛ն :

Լայողես , խնդամ , խայտամ , անսամ  
ջանամ , խաղամ , հաղամ : Լայլք  
սոյնա՛յ ամ , այի , ա եզերեալք :

Կողմնական Ներգործական :

Բանամ , բացի , բաց : Թանամ ,  
թացի , թաց : Բառնամ , բարձի ,  
բարձ : Լճառնամ , ամբարձի ,  
ամբարձ : Համբառնամ , համբար  
ձի , համբարձ :

Կողմնական Բնորոշական :

Պամ , եկի , եկ : Կամ , կացի ,  
կաց : Կեամ , կեցի , կեաց :

Կեսայ՝ նոյնին երևի և ոչ է . զի չէ  
յարմար ներկային իւրում :

Լ րհարեալի Լ, երգործականք :

Գ ողանամ, գողացայ, գողացիր :

Ս տանամ, ստացայ, ստացիր :

Ի մանամ, իմացայ, իմացիր :

Ս ուանամ, մոռացայ, մոռացիր :

Ի մաչի, մոռացի, լինին և ս իմ, մոռաց

Լ րհարեալի Լ, երգականք :

Լ անամ, էացայ, էացիր :

Գ ոյանամ, գոյացայ, գոյացիր :

Օ արդանամ, ժրանամ, զօրանամ

սլանամ, վերանամ, ուրախանամ :

և այլք յոյժ բազումք այսպէս

անամ, աչայ, աչիք եզերեալք :

Վ ակ այսպիսիք, Ս երձենամ,

մօտենամ, արբենամ, գերբենամ,

թերբենամ, յարբենամ, խնամենամ

թշնամենամ : և այլք սակաճք

սոյնպէ եզերեալք :

Վ ակ այսպիսիք, Յ ուսամ, յու

սացայ, յուսացիր, կամ յուսա :

Յ անկամ, ցանկացայ, ցանկացիր,

կամ ցանկա՛: Յնծամ, զնծացայ,  
ցնծացիր, կամ ցնծա՛: Տարփամ,  
տենչամ, դողամ, փութամ. և  
այլք սոյնպիսիք:

Լքիստեսայ և Կողմնէն Բնդիւականս:  
Պառնամ, դարձայ, դարձ. կամ  
դարձի՛ր: Լքթամ, չոքայ, Էրթ:  
Տրամայականս՝ Գայ, է՛ կողմնէնս.  
Իսկ՝ Գայի՛ր՝ է՛ նոյնականս:

Բայք Պատկանօջք Լքրորք Կերպին.  
Նոյնական Ներգործական:

Բնկենում, ընկեցի, ընկեա՛:  
Սորա երրորդ դէմն կատարելոյն՝  
լինի ընկեց, աննման այլոցն ամե-  
նեցունս: Լէ՛ զայս միայն ունե-  
լով աննմանութի այլոց, ոչ պատ-  
կանի համարիլ կողմնական: զի  
թէ և լինիցի՝ ընկեազ՝ ոչ լինի  
խորթաձայն: Եւ Եւ ը սովորուե-  
նախնեացն՝ դնի, ընկեց:

Աղմակիան Վերգործականս :

Ընունում առի առ : Վերծում  
դերծի դերծ : Ընում լցի լնց :

Վերում գելի գել : Յերում  
ցելի ցել : Օ ենում զենի զեն :

Օ եղում զեղի զեղ : Լորգե  
լում արգելի արգել : Յանե  
լում յանելի յանել : Ե այլ :

Երկարեսայ Վերգործականս :

Օ գենում, զգեցայ, զգեցիր :

Ընթեռնում, թերցայ, թերցիր :

Երկարեսայ և Աղմակիան Վերգործիս :

Ալանում, կալայ, կալ :

Ընկանում, ընկալայ, ընկալ :

Երկարեսայ Ընդդիւսանս :

Երգնում երգունայ երգունի :

Սեռնում ջեռայ ջեռի :

Ունում ուռայ ուռի :

Տեծնում Տեծայ Տեծի :

Յենում յեցայ յեցիր :

Ե այլք սակաւք, որոց կտրին

լինի այ :

Վահ աշտպիսիս :

Օ արթնում զարթեայ զարթիր :

Յ ասնում ցասեայ ցասիր :

Պ ահնում պակեայ պակիր :

Ք աղցնում քաղցեայ քաղցիր :

Փ ախնում փախեայ փախիր :

Ո ստնում ոստեայ ոստիր :

և այլ, որոց կտրն լինի՝ էայ :

Բայ Պափանօշ Զրդ կերպին :

կրանորական Լքից կերպից :

Լ յրիմ այրեցայ այրեաց, կամ

այրեցիր : Բ ուժիմ բուժեցայ

բուժեաց, կամ բուժեցիր : Վ ո

վիմ գովեցայ գովեաց, կամ գ ո

վեցիր : և այլն :

Լճիմ ածայ ածիր : Բ երիմ բե

րայ բերիր : Լ րկանիմ արկայ

արկիր : և այլն :

Լ սիմ լուեայ եղէ լուեալ լեր :

Ղ անաչիմ ծանուցեալ եղէ

ծանուցեալ լեր : 94



Վարձուցանիմ, ձուցայ, ձուցիր:

Յարուցանիմ, ըուցայ, ըուցիր:

Օանուցանիմ, նուցայ, նուցիր:

Լեցուցանիմ, ցուցայ, ցուցիր:

Լպրեցուցանիմ, ցուցայ, ցուցիր:

և այլք:

Բանիմ բացայ բացիր: Թանիմ

թացայ թացիր: Բառնիմ բժշայ

բարձիր: Լմբառնիմ ամբարձայ

ամբարձիր: և այլն:

Վողանիմ գողացեալ եղէ գո

ղացեալ լեր: Ստանիմ ստացեալ

եղէ ստացլ լեր: և այլն:

Լռնանիմ առայ առիր: Վեր

ծանիմ գերծայ գերծիր: Լնա

նիմ լցայ լցիր: Վելանիմ գե

լայ գելիր: Յելանիմ ցելայ ցե

լիր: Օենանիմ զենայ զենիր:

և այլն:

Օգենանիմ զգեցեալ եղէ ըզ

գեցեալ լեր: Ընթեռնանիմ ըն

թերցեալ եղէ ընթերցեալ լեր:

Օ անաչան կրանորայիբոյ Քեդէլ  
խանս եւ հասարայիս :

Ի Քեդէլայանս եղերեցեալս , իմ ,  
եցայ , եաց :

Տրտմիմ տրտմեցայ տրտմեաց :

Բերկրիմ բերկրցայ բերկրեաց :

Յագիմ յագեցայ յագեաց :

Յանիմ ցանեցայ ցանեաց :

Ժպտիմ ժպտեցայ ժպտեաց :

Բնակիմ բնակեցայ բնակեաց :

Ի սոյն յն հասարայիս :

Խորհիմ խորհեցայ խորհեաց :

Խօսիմ խօսեցայ խօսեաց :

Նայիմ նայեցայ նայեաց :

Տայիմ տայեցայ տայեաց :

Փարիմ փարեցայ փարեաց :

Կամիմ կամեցայ կամեաց :

Շահիմ շահեցայ շահեաց :

Տամարիմ րեցայ մարեաց :

Գանանիմ նեցայ ճանեաց :

Լայլբ սոյնպիսիք : Որք թեպէտ

ունին զզօրութի հմրակի, սակայն  
'ի տեղի կրահորականի հաղիւ թէ  
'ի գործածին: այլ դնին յաճախ  
ներգործական նշանակութի:

2 Արդմբայանք է զբիւար, տնիմ, այ, իր:

Անկանիմ անկայ անկիր:

Սեռանիմ մեռայ մեռիր:

Բուսանիմ բուսայ բուսիր:

Սընանիմ սընայ սընիր:

Ջեռանիմ ջեռայ ջեռիր:

Ի սոյն յի հասարակս:

Ճանանիմ ծնայ ծնիր:

Սկսանիմ սկսայ սկսիր:

Ուսանիմ ուսայ ուսիր:

Վարկանիմ վարկայ վարկիր:

Լ. սո Գիգին և Արդմբայան հմրակս:

Տանիմ տարայ տար: Ունիմ, կա

այ, կալ, և կալեալ լեր: Անդու

նիմ ընկալայ ընկալ և ընկալեալ

լեր:

3 (Նշագրումներ, ջիմ, եայ, իր :

|         |         |          |
|---------|---------|----------|
| Մատչիմ  | մատեայ  | մատիր :  |
| Փախչիմ  | փախեայ  | փախիր :  |
| Թաքչիմ  | թաքեայ  | թաքիր :  |
| Տանգչիմ | Տանգեայ | Տանգիր : |
| Թռչիմ   | Թռեայ   | Թռիր :   |
| Երկնչիմ | երկեայ  | երկիր :  |
| Կորնչիմ | կորեայ  | և այլ :  |

Կրանորայերայ և Կռնննն (Նշագրում :

Նստիմ, նստայ, նխստ :

Եւ աստ գիտելի է, զի ՚ի կողմնս  
կանաց՝ ոմանք ՚ի կատարելումն  
սահմանկնին՝ փոխեն զձե ձայնին  
և այլապէս ձեանորին : ոմանք  
յոյժ աննմանապէս, և ոմանք  
սակաւ ինչ : Եւ են այսոքիկ,  
Տամ, Ետու : Վամ, Եկի :  
Երթամ, չոքայ : Ընեմ, արարի :  
Յառնեմ, յարեայ : Լսեմ, լուայ :  
Լմպեմ, արբի : Վնեմ, Եդի :  
Ուտեմ, կերի : Ղանաջեմ, ծունէյ :

Մեղանչեմ, մեղայ, Սունիմ, կա  
լայ, Բնդուունիմ, ընկալայ:

Բայց այսոցիկ լսեմ, ըմպեմ,  
ճանաչեմ, մեղանչեմ, ունիմ,  
ընդուունիմ, կարեն և ըստ ձևոյ  
ձայնին ձևանալ կատարեալքն:

Սրգոն, լսեմ, լսեցի: ըմպեմ, ըմ  
պեցի: ճանաչեմ, ճանաչեցի: մե  
ղանչեմ, մեղանչեցի: ունիմ, ու  
նեցայ, ընդուունիմ, ընդուունեցի,

կամ ընդուունեցայ: Ըստ և կա  
տարեւոցս այսոցիկ, արբի, ծանեյ,  
կալայ, ընկալայ, ձևանան ներ  
կայք այսպէս, արբնում, ծանիմ,

կալնում, ընկալնում: Իսկ լուսայ,  
մեղայ, ըստ ձևոյ ձայնին ոչ ունե  
լով ներկայս, մնան պակասելք:

Եւ զայն որ ըն ձևոյ ձայնին,  
և զայն որ ըստ նախնեացն:  
Ըստ յեւոյ Չայնին այսպէս:  
Լսեմ լսեցի լսեա: Ըմպեմ ըմ  
պեցի ըմպեա: Ճանաչեմ ճանա  
չեցի ճանաչեա: Մեղանչեմ

մեղանչեցի մեղանչեա՛: Օտանիմ  
ծանեայ ծանիր: Ունիմ ունե  
գայ ունեցիր: Բնդունիմ ըն  
դունեցի, կամ ընդունեցայ,  
ընդունեա՛: Կալնում կալայ կալ  
Բնկալնում ընկալայ ընկալ:

Եւ ըստ Եւախնեացն այսպէս:

Լսեմ լուայ լուր: Բմպեմ ար  
բի արբ: Շանաչեմ ծանեյ ծա  
նիր: Սեղանչեմ մեղայ մեղիր:  
Ունիմ կալայ կալ: Բնդունիմ  
ընկալայ ընկալ: Սեշիր, ոչ գոյ  
Թեպէտ ըստ նախնեացն, այլ ըստ  
կատարելոյն այնպէս ձևանայ:

Յառաֆս Լախան Լայից:

Պրոպ 16

Չորք այսոքիկ ՚ի բայից,  
եմ, գամ, շինիմ, եղանիմ,  
կոչին հական բայք: Օ ի զգոլն  
կամ զլինիլն հուե միայն ցուցա  
նեն, և իրակութի ինչ ոչ ունին:

Ի սկ միւսքն կոչին իրակականք .  
 վս զի իրակութեանն են նշանա  
 կիչք . այսինքն գործողուէ , կամ  
 կրողու թեան . Լը ղ ղիցուք ասա  
 զխոնարհմունս էական  
 բայից :

Ա այս՝ Լ յմ , այսն և այսան խոնարհի :  
 Սահմանականի Ներկայ :

Լ մ ես է : Լ մք էք են .  
 Լ նցեալ Լ նկարար

Լ ի էիւ էր . Լ աք էիք էին .  
 Սորադասականի Լ պատանի

Իցեմ իցես իցէ . Իցեմք իցէք  
 իցեն :

Ա այս՝ Պ ում , այսպէս և այսան խոն" :  
 Պ ում գ ոս գ ոյ : Պ ումք գ ոք գ ոն :  
 Լ նցեալ Լ նկարար

Պ նի գ նիւ գ նր : Պ նաք  
 գ նիք գ նին :

Լայն՝ Լ ինիմ, այսպէս իսնարհն ։

Սահանականի Լերիայ ։

Լ ինիմ լինիս լինի

Լ ինիմք լինիք լինին

Լնցեալ Լնչաբար

Լ ինէի լինէիր լինէր

Լ ինէաք լինէիք լինէին

Լնցեալ Յարակաբար

Լ եալեմ լեալես լեալէ

Լ եալեմք լեալէք լեալեն

Լնցեալ Վերակաբար

Լ եալէի լեալէիր լեալէր

Լ եալէաք լեալէիք լեալէին

Լպտանի

Լ իցիմ լիցիս լիցի

Լ իցումք լիցիք լիցին

Սորբագասականի Լպտանի ։

Լ ինիցիմ լինիցիս լինիցի

Լ ինիցիմք լինիցիք լինիցին



Տրամայականի Որպիտեան առ Լորի  
բորր Գեֆն Ներչայ:

Լ Եր, մի' լենիր: Լ Երուք, մի' լենիք

Լ Կառանի, Լ Իջիր, կամ լեցիս:

մի' լեցիս, կամ մի' լենիցիս: Լ Իջիք,  
մի' լենիջիք, կամ մի' լենիցիք:

Լ - Լորրորր Գեֆն:

Լ Եցի' մի' լեցի, կամ մի' լենիցի:

Լ Եցին' մի' լեցին, կամ մի' լենիցին:

Լ - Լառքին Գեֆն:

Լ Եցուք: մի' լեցուք, կամ մի' լե  
նիցիմք:

Բայս' Լառանիմ, այսպէս իոնարհի:

Սահանականի Ներչայ:

Լառանիմ Եղանիս Եղանի

Լառանիմք Եղանիք Եղանին

Լ՛նչեալ Լ՛նչադար

Եղանէի եղանէիր եղանէր  
Եղանէաք եղանէիք եղանէին

Լ՛նչեալ Լ՛արարեալ

Եղէ եղեր եղև  
Եղաք եղէք եղեն

Լ՛նչեալ Յարախարար

Եղեալ եմ եղել ես եղել է  
Եղեալ եմք եղել էք եղել են

Լ՛նչեալ Վերախարար

Եղեալ էի եղել էիր եղել էր  
Եղել էաք եղել էիք եղել էին

Լ՛ղատնի

Եղէց եղիցիս եղիցի  
Եղիցուք եղիցիք եղիցին

Սորաքառանիսնի Լ՛ղատնի :

Եղանիցիմ եղանիցիս եղանիցի  
Եղանիցիմք անիցիք անիցին

Տրամայտիտի Որդիութեան աւարտ  
բոլոր Պատիւներէն :

Եղեր, մի՛ եղանիր : Եղերուք,  
մի՛ եղանիք :

Լուսանի, Եղելիր, կամ՝ եղիցիս :  
մի՛ եղիցիս, կամ՝ մի՛ եղանիցիս :

Եղելիք, մի՛ եղելիք, կամ՝ մի՛ եղանի  
լիք : մի՛ եղելիք, կամ՝ մի՛ եղանիցիք :

Լուսանի Պատիւներ :

Եղիցի՛ . մի՛ եղիցի, կամ՝ մի՛ եղանիցի :  
Եղիցին . մի՛ եղիցին . կամ՝  
մի՛ եղանիցին :

Լուսանի Պատիւներ :

Եղիցուք . մի՛ եղիցուք, կամ՝ մի՛  
եղիցիմք, կամ՝ մի՛ եղանիցուք,  
կամ՝ մի՛ եղանիցիմք :

Եւ ծանիր, զի Տրամայկնս այս՝  
եւիր, թէպէտ ոչ գոյ՛ ի նախնեաց,  
բայց ըստ ձեռոյ ձայնին եղաք  
այնպէ՛, զի մի՛ այնու միայն և նա՛  
պակաս գտանիցի :

**Ե**ւ ծանիր, զի ՚ի խոնարհմուն  
 էական բայիցս՝ ստորագասկնի  
 որակուէ ապառնին միայն եդաւ,  
 իսկ ըղձական բնաւ ոչ եդաւ:  
**Օ** ի ապառնին ստորագասկնին՝  
 է և ապառնի ըղձականին որպէս և  
 ուսաք: Իսկ զայլ ամանական սո  
 ցին դիւրին է հանել ՚ի սահմա  
 նականէն. որպէս հանեալ եղեն  
 միւս բայիցն ՚ի խոնարհմունս  
 նոցին:

**Օ** անիր և զայս, զի բայս եմ,  
 ունի հրամայական մի ՚ի սբ աւե  
 տարանին, եր. ոպ՝ ողջ եր Թգր  
 հրէից. այսինքն ըէր: Արոյ յոգ  
 նականն ձեանայ՝ երուք: Աւնի  
 և ապառնի մի սահմանի երդ դի  
 մին՝ յերգս սբյն ներսէսի, եպէ:  
 Աջ իմ կամաւ, այլ բոյդ եսգէ:  
 Այ և գոմին ՚ի կիրարկանի միայն  
 երրդ դէմն՝ գոյե: Արոյ Թէ կա  
 միցիմք ձեացուցանել և զայլ  
 միւս դէման, կարելի է ասել,

եցից, եսցես, եսցէ. Ասցուք,  
 եսցէք, եսցեն: Վուցեմ, գու-  
 ցես, գուցէ Վուցեմք, գուցէք,  
 գուցեն: Որպէս և եալն Նին,  
 եալեմ, եալես, եալէ: Բայց  
 այսոքիկ ոչ են Տարկանորք. զե-  
 բայքս՝ եմ, գում, գուով պակասա-  
 ճորք, ՚ի միւս երկուցն լցուցա-  
 ՚ին. որպէս և նոքա ՚ի միմեանց:  
 Լսացի, ոպ և նոքա ՚ի միմեանց,  
 զեթէպէտ լինիմն՝ ՚ի կատրլումն  
 միայն պակասի, և եղանիմն ոչ է  
 պակասաճոր. բայց երկոցունցն  
 ևս ամ խոնարհմունքն ոչ սովո-  
 րապէս ՚ի կիր արկանին. այլ՝ որք  
 սովորականքն են: Որպ և տեղի  
 ասելոյ՝ եղանիմ, եղանէի. լեալ  
 եմ, լեալ էի, սովորական է, լինիմ,  
 լինէի. եղեալ եմ, եղեալ էի.

Լսա այսց և զայլսն իմա՛:

Վաւ, գոմ, գոմ, ՚ի բանս նախնեց  
 չեն առեալ ՚ի գործ:

**Ա**նդէմ բայ կոչին այնք, որք  
 զերրորդ դէմն միայն ու  
 նին՝ եզական թո՛ւով. և այն և ս  
 ո՛չ օգտէ՛ ՚ի տեղի դիմի: Որքոն,  
 պարտէ, պատշաճէ, ճահէ, բմ  
 բոնէ, հարկէ, արժնէ, վայելու չէ  
 և այլք: Լսացի՛ և այն և ս ոչ օգ  
 տէ՛ ՚ի տեղի դիմի. զի մինչ ասէ ոք,  
 պարտէ նստիլ աստ, դէմ ինչ ո՛չ  
 որոշի թէ ո՛ւմ արդեօք պարտէ  
 նստիլ: Իսկ յորժմ ասէ, պարտէ  
 ինձ նստիլ աստ, որոշի իրակուին  
 և լինի առաջին դէմ: Եւ այսպ  
 իվթ երից դիմացն և ս՝ նոյն երդ  
 դիմա՛ն վարի: Ոպ ասել՝ պարտէ  
 ինձ գնալ. պարտէ քեզ մնալ.  
 պարտէ նմա գալ. և այլ:

Եւ իոնարհմանս Լեւրեմ Բայից

չինին այսպէս:


Սահմանային, Պարտէ: Պարտէր:  
Պարտ եղև: Պարտ լեալէ:  
Պարտ լեալէր: Պարտ լիցի:

Տրամայական, Պարտ լիցի. պարտ  
մի լիցի, կամ մի լենիցի:

Լ՛հա՛ այսքան է խոնարհումն ան  
դէմ բային և ոչ այլ. վ՛ս զի միայն  
եզական է և երրորդ դէմ:

Իսկ զստորագասակունն և զըղձա  
կանն դիւրին է հանել ՚ի սահմա  
նականէն ուն զայլոցն:

Լ՛ներևոյի, Պարտ լինիլ, պարտ լի  
նելոյ, պարտ լինելով:



Ղառեալ ըլ բային՝ որչափ էր ճրտայ՝  
դիւրասանելի: այժմ է՝ ըլ չընի՝  
ընդոսանելու լիանն՝ ըսչոսանելի:

Որ գտի յինքեան՝ ըլ նըմանու լիանն՝  
անձան և բայի: զի է՝ գործանուան  
որ մլտ ՚ի բայէն՝ ստաւադայի:

Յազատ Լեհոսնէ Լուսնէս :

Պրահ 17

**Ն**դուներու թիւ է երրորդ  
մասն բանի՝ ծնել ի բայէ .  
որ զէութիւն և զիրակու  
թիւն իմիասին նշանակէ Լճ է  
զէրք նորին՝ են հինգ , օշ , եչ ,  
եալ , լի , ւոյ : Ո՞րգուն՝ փրկող , փրո  
կիչ , փրկեալ , փրկելի , փրկելոյ ,  
Լճագի , զէութիւն և զիրակու թիւ  
իմիասին նշանակէ : Ս ի անունն՝  
էութ է նշանակող , և բայն՝ իրա  
կութ , ունի ցուցաւ յերեսն 18 և 48  
Ի սկ ընդուներու թիւն է նշանակող  
էութ և իրակութ : զի ձայնս այս  
տրիշ , նշանակէ զանձն փրկողին .



որ է էութիւն . այսինքն փրկողն  
 Նշանակէ՛ և զիրակութի նորին ,  
 որ է փրկելն : Ա՛յ յասացելոցս  
 Տետե ի թէ՛ ընդունելութիւն ունի  
 զնմանութի անունն և զնմանութի  
 բայի : Օ՛ ի ըստ այնմ որ նշանաւ  
 կէ զէութիւն , է՛ իբրև անուն .  
 և ըստ այնմ որ նշանակէ զիրակու  
 թիւնն , է՛ իբրև բայ :

Ա՛յ կոչի ընդունելութիւն ,  
 զի անուն մակադրական ընդ  
 լով յիրակութն , այնու անհամբն  
 անունանակոչի : Օ՛ որ օրինակ ,  
 այն որ փրկէ՛ փրկող անուննի .  
 և այն որ փրկի՛ փրկեալ յորջորջի :

Ա՛յ որով Տետե ընդունելութիւն  
 ունի զնմանութի անունն և ըզ  
 նմանութի բայի որպէ՛ս ցուցան ,  
 Տետեմունք նորին՝ են ՚ի Տետե  
 մանց նոցին . այսինքն անունն և  
 բայի : և են Տինգ : Ա՛եռ , թիւն ,  
 Տեսակ , Ա՛մանակ , և Տողով :

Ա՛եռք ընդունելութե՛ են չորք

ըստ բային: Վերգործին, Արաւո  
 րական, Մեդիջական, Տարակ  
 Վերգործինն լինի, ոչ, իչ, եւ, եւր:  
 Տիգոն՝ փրկող, փրկիչ, փրկեալ,  
 փրկելոց: Արաւորականն լինի,  
 եյեալ, լի, իւր: Որզան, փրկեցել,  
 փրկելի, փրկելոց: Մեդիջականն  
 լինի, ոչ, եւ, լւ: Տիգան գնացող,  
 գնացլ, գնալոց: Եւսկ վերջս՝ իչ,  
 հազիւ հանդիպի Ըմիջականաց:  
 Որ Թէպէտ ասի՝ բնակիչ, բայց  
 ոչ ասի, գնացիչ, ննջիչ, և այլ:  
 Տարակն լինի, եւ, լւ: Որկէն՝  
 բացել, բանալոց: Ղենել, Ղենլոց:  
 և այլք: Որք ունին զնշանակուի  
 ներգործականի և կրաւորականի,  
 Վերգործական՝ որդոն, պետրոս բա  
 ցեալ զդուռն՝ զոր ինքն բանա  
 լոց էր, և Ղենեալ զգառն՝ զոր  
 ինքն Ղենլոց էր, եփեաց զնա և  
 եդ առաջի եղբարցն:

Աւ իբաւորական՝ հիգոն, դուռն  
 եղև բացեալ ՚ի պետրոսէն, որ ՚ի

նման է բանալոց էր • այսպէս և  
միւսն • Ապց և կրաւորականք  
այսոքիկ՝ եյաւ, իւր, ՚ի շարադրու  
թիս նախնեաց՝ սովորապէս ըստ  
կերպի ներգործականացն դնին.  
Արմ ասել, թաղեալքն ՚ի միզս՝  
թաղելոց են ՚ի դժոխս: Ղտեղի  
ասելոյ, թաղեցեալքն, թաղիլոց.  
Եւ այս՝ վասն Թեթև և համեղ  
բերելոյ զձայնն:

Թ. իւք ըուներուէ՝ են երկու .  
ոմ անունանն և բային: Եւ զական՝  
փրկող, փրկիչ, փրկեալ, փրկելի.  
Յոգնական՝ փրկողք, փրկիչք,  
փրկեալք, փրկելիք:

Տեսակն է նմանապէս երկու .  
նախատիպ և ածանցեալ  
Ապց ընդունելուին կրկին կեր  
պիւն ածանցի. ը անուն և ը բայի  
Բար անուն, որպէս յիշող, յիշո  
ղութիւն, յիշողական: Արկնա  
ծանցական, յիշողականութիւն  
Եւ ըստ բայի, ոմ յիշող, յիշեցու

ցանօղ . յիշեչ , յիշեցուցիչ . յիշ  
եալ , յիշեցուցլ . և այլ .

Լ՝ մանակք ընդունելու թէ՛ են  
երեք բուն ամանակքն . այսինքն  
ներկայն , անցեալն , և ապառնին .  
Վերկայք են՝ օշն , և իչն . Լ՝ նցլք  
են՝ եալն , և եյեալն . Իսկ՝ լին , և  
լոցն , են ապառնիք :

Տողովք ընդունելու թէ՛ լինին  
ըստ անունն . ( ) ղն՝ հողովի ,  
Փրկօղ , փրկողի , փրկողիւն .  
Փրկօղք , փրկողաց , փրկողօք .  
Իչն՝ հողովի , ոնչ ազգ . ազգի ազ  
գաւն . Լալն՝ հողովի որնչ գործ  
գործոյ գործով . Լ ին՝ ոնչ բարի  
բարւոյ , և այլն . Իսկ լոցն՝ հազիւ  
անունանայ . վսյ և ոչ հողովի ,  
եթէ ոչ ՚ի յոյժ հարկաւորու թէ .  
Վաւ իչն , ոչ ըստ ամ նախատիպ  
բայից հողովի յարմարապէս .

Լ . յս վերջս՝ իչ , սակաւուց նա  
խատրպից յարմարի . իսկ ածան  
ցեւոց՝ գրեթէ ամցան պատկանի .

Ույ յարուցիչ, լցուցիչ, կեցուցիչ, ապրեցուցիչ, և այլ:

Եւ ծանիր աստ, զի ընդունել լուծիս՝ կանգնող, եթէ նշանա կէ զկանգնեալ ոք ըստ ինքեան, է ընդմիջական: Եւ սկ եթէ նշանա կէ զկանգնելն ուրուք զայլ ոք, է ներգրծկան: Եւ յսպիսիք են, լացող, ողբացող, սրգացող, և այլ:

Որոց շատ կիրառու իքն ընդմիջականապէս լինին:

Յազագս Բնիման Բնդունելու Բեցի  
'ի Բայի: Պրահ 19

Երկայ ընդունելու Բեցն ու մանք՝ ի ներկայական բայից ծնանին: Սրգոն, փրկեմ, փրկող, փրկիչ: Սրբեմ, սրբող, սրբիչ: Սարժեմ, վարժող, վարժիչ: Բնդունիմ, ընդունող, լնունիչ: Եւ ոմանք՝ ի կատրլոյն ծնանին: Սրգոն՝ բարձի, բարձող, բարձիչ: Բացի, բացող, բացիչ: Եւ ունացի,

լուսացող, լուսացիչ, և այլ: Իսկ ռ  
 մանց՝ մի և նոյն է ծնանիլն՝ ի ներ  
 կայէն կամ՝ ի կատարելոյն: Ու  
 ածեմ, ածի՝ ածօղ, ածիչ: Բերեմ  
 բերի՝ բերող, բերիչ: Օ ենում,  
 զենի՝ զենօղ, զենիչ: Լ. բգելում  
 արգելի՝ արգելօղ, արգելիչ:  
 Լ. լ՝ ի բայից ոմանց՝ օղն կրկին  
 ծնանի. մինն ի ներկայէն, մինն  
 ի կատարելոյն: Իսկ՝ ի չն, յոմանց  
 երկու ծնանի, յոմանց մի, յո  
 մանց ո՛չ: Ո՛րգոն, ուտեմ, ուտօղ  
 ուտիչ: Կերի, կերօղ կերիչ:  
 Լ. ռնեմ, առնօղ՝ արարի, արրօղ  
 արարիչ: Լ. սեմ, ասօղ՝ ասացի,  
 ասացօղ: Իսկ և յածանցական  
 բայից՝ ծնանին երկու օղ, և մի իչ:  
 Ո՛րգոն, յիշեցուցանեմ, յիշեցու  
 ցանօղ՝ յիշեցուցի, յիշեցուցօղ  
 յիշեցուցիչ: Լ. լ՝ այսպէ՛ ամենայն  
 ածանցելոց՝ ի չն, ի կատարելոյն  
 ծնանի ունիցուցաւ:

Իսկ՝ եւն, յայտէ զի՛րդրադիմէն

Ծնայ, այսինքն 'ի յարակատարէն.  
 Օ 'ի մինչ բառնաս զդէմն՝ Ծնայ  
 ընդունելուի. Որգոն, գրէլեմ,  
 գրեալ: գրեցեալեմ, գրեցեալ.  
 Նոյնս լուսն, հեղեալ, և այլն.  
 | Ին և լոյն, յաներևութէն ծը  
 նանին: Որգոն, գրել, գրելի, գը  
 րելոց: | լուսնալ, լուսնալի,  
 լուսնալոց: հեղուլ, հեղլի,  
 հեղլոց. և այլ: | Վճ տես, զի՛ լին  
 որ է կրաւորական, 'ի ներգործա  
 կանէն ծնանի և ոչ 'ի կրաւորա  
 կանէն: Ոսկ գրել, գրելի. և ոչ  
 գրիլ, գրիլի: Սոյնպէս է և լոյն:  
 Ի այց եթէ կրաւորասկ կամիցիմք  
 գնել զլոցն, 'ի կրաւորականէն  
 ծնեցուցանեմք: Որգոն, գրիլ,  
 գրիլոց, լուսնիլ, լուսնիլոց: հե  
 ղանիլ, հեղանիլոց: Եւ այսպի  
 սիք 'ի յոյժ հարկաւոր տեղիս են  
 կիրառելիք, և ոչ յամ ուրեք.  
 զի խորթութի բերէ շարագրւեն:

Եւ այս լուսնալուսնան:

Յաչագա Պերանունան:

Պրաչ 20



Երանունն է Չորրորդ  
մասն բանի, որ փոխա  
նակ անունան դնի, և  
զբացորոշեալ դէմն ցուցանէ:

Որգոն՝ էս, գու, նա, և այլ:

Լսացա՛ն, ՚ի տեղի անունան դնի,  
զի ՚ի տեղի ասելոյ՝ պօղոսս գը  
նացի, ասեմ, էս գնացի: և ՚ի տե  
ղի ասելոյ՝ պետրոսդ գնացեր,  
ասեմ, գու գնացեր: և ՚ի տեղի  
ասելոյ՝ յակոբն գնաց, ասեմք,  
նա՛ գնաց: Լսցա՛ն, զբացորոշեալ  
դէմն ցուցանէ: զի ասելով, էս,  
նշանակի առաջին դէմն: Եւ և  
սելով, գու, նշանակի երկրորդ  
դէմն: Եւ և ասելով, նա, նշանակի  
երրորդ դէմն: այսինքն՝ յակոբն,  
յովսէփն, կամ այլ:

Ոմանք ՚ի դերանունանց էակունք



են, ոմանք ունականք: Ասկան  
կոչին այնք, որք զանձին զէ ու  
թին ցուցանեն: և են այսոքիկ:

ես, դու, նա, սա, դա, ինքն:

Ան ունական կոչին այնք, որք  
զուներցեալն նշանակեն: և են  
այսոքիկ, իմ, քո, իւր, մեր, ձեր:

Ան ոմն կոչի յարաբերական,  
և է այս, որ: Ան ասի յարաբե  
րական, ոմն թէ յառաջբերական.

զի զնախընթաց անունն դարձչ  
յառաջ բերէ և ածէ՝ ՚ի միա.

( ) ինչ, օրհնեսցէ՛ զքեզ տր՝ ՚ի սի  
օնէ, որ արար զերկինս և զերկիր.

Ան զանի աստ՝ դերանունս  
այս՝ որ, յառաջ բերել ածէ ՚ի միա  
զնախընթաց անունն՝ տր.

Ան դերանունաւորս, նա, սա, դա,  
բաց ՚ի կոչիլոյն էական, կոչին և ս  
ցուցականք. զի զայն զոր նշանա  
կեն, ոմն թէ մատամբ ցուցանեն.

Աստ այնմ, դա է որդի իմ  
սիրելի:

Եւ Տետեմունք դերանունաց  
են չորք : Թիւն , Գէմ , Տե  
սակ , Տողով : զԹիւնն ՚ի Տողով  
մունսն տես :

Գէմքն են երեք ըստ բային .  
առաջին , երկրորդ , երրորդ :

Լուսին , Եւ : Լքրկրորդ , Գ . . .  
Լքրրորդ , նա . սա . Գա . Ինչն :

Սոցին Տետեին և ունականքն .  
զի , իմ , Գր , Տետեին առջին դիմին :

Բ . , յիւ , Տետեին երկրորդ դիմին :

Եւ իւր , Տետեի երրորդ դիմին :

Իսկ յարաբերականն՝ առ երեք  
դէման ևս վերաբերի : Այլ ասել

ես որ խօսիմ , դու որ լսես . նա որ  
ննջէ : Եւ այնպէս և էականս այս՝

Ինչն , երբ ըստ ինքեան միայնակ  
վարի , զերրորդ դէմն միայն ցու

ցանէ : Իսկ յորժամ զկենի այլ  
դերանունան դնիցի , որում և կցի՝

նմին Տետեի , և այնպէս առ ամ  
դէման վերաբերի : Այլ ասել

ես ինքն եմ . դու ինքն ես . նա

Ինքն է . սա ինքն է . դա ինքն է .  
 Լա ինքն էի որ եկի . Վա ինքն  
 էիր որ եկիր . Վա ինքն էր որ եկն .  
 Լճ տես , ղի սա , դա , նա , Թէպէտ  
 երեքեանն ևս զերրորդ դէմն նշա  
 նակեն , սակայն սա՛ նշանակէ ըզ  
 մօտա՛որն առաջին դիմին : դա ,  
 նշանակէ զմօտա՛որն եկող դիմին :  
 Իսկ՝ նա , պարզապէս զերրորդ դէմն  
 նշանակէ :

**Տ**եսակն է երկու , նախատիպ և  
 ածանցեալ . Վախատիպք են  
 ասացեալքդ ամենեքեան :

Իսկ ածանցլ , իմային . քոյային .  
 իւրային . մերային . ձերային .

Քոյահան . իւրական . ինքնակն .  
 մերական . ձերական : Ինքնու՛ք .

եսու՛քի : Իայց ՚՞ , դնի քոյին ,

՚ի տեղի ասելոյ քոյային . ղի հա  
 մեղէ քոյին քան քոյային : Ուր և

դտանի մերոյին , ՚ի տեղի ասելոյ՝  
 մերային : Իսկ ՚ի հոլովմանն՝ դնի

քոյանոյ , մերայնոյ . և ոչ քոյնոյ ,

Մերոյնոյ: Ի սկ այլ դերանձանքն  
այսինքն՝ դու, նա, սա, դա,  
ոչ ածանցին յարմարապէս:

Ուն և տն հազին լինի ածանցլ՝  
ոնք թէ ասիցես, եսական ախտն՝  
որ է ետուին՝ է՛ արմտ ամ չարեց,  
Լ՛ն ցուցա՛ն թէ՛ զերիս միայն  
ունի ածանցմունս դերանունն:  
այի, ախ, ունի: Ի սկ՝ ոյին, է՛  
նոյնինքն այի ուն ցուցա՛ն:

Տողովք դերանունանց՝ են ըստ  
անունան. բայց զկոչականն ոչ ու  
նին ամքն. և տես ՚իներբոյ:

Տողովումն Պաերանունան, Լաս:

Լալայան: Լաս. իմ. ինև. զինև.  
զիս. զինէն. յինէն. || ինձ, զիս,  
առիս, ընդիս. || յիս:

Յոգնական: Ս՛եք. մեր, մեօք.  
զմեօք. զմեզ. զմէնջ. ՚ի մէնջ.  
|| մեզ, ցմեզ, առ մեզ, ընդ մեզ. ||  
՚ի մեզ.

Տ ուղիւնն Ղա երանոճանս , Ղա ու :

Լ յախան : Ղա ու . քոյ . քե . զքե  
զքեզ . զքէն . 'ի քէն . || քեզ ,  
ցքեզ , առ քեզ . || 'ի քեզ . ո՛վ դու :

Յ ոգնախան : Ղա ու . ք . ձեր . ձեօք .  
զձեօք . զձեզ . զձէնջ . 'ի ձէնջ .  
|| ձեզ , ցձեզ , առ ձեզ . || 'ի ձեզ .  
ո՛վ դու . ք :

Տ ուղիւնն Ղա երանոճանս , Ղա ա :

Լ յախան : Ղա ա || նր , նորին , կամ նո  
րուն || նովա՛ն , նովին , ն յնովիմք ||  
զնովա՛ն , զնովին , կամ զնովիմք ||  
զնա || զնմանէ || 'ի նմանէ || նմա ,  
նմին , 'ի նա , ցնա , առ նա՛ || 'ի նմա ,  
'ի նմին : Յ ոգնախան , Ղա ռքա , նռքին |  
նց , նոցին , կամ նոցուն , կամ նո  
ցունց || նռքօք || զնռքօք || զնա , զնո  
սին || զնոցանէ || 'ի նոցանէ || նոցա ,  
ցնա , առ նա՛ || 'ի նոսա , 'ի նոսին ,  
կամ 'ի նոսում : Ղա տայսմ Տ ուղ  
վին , սա , սորա : դա , դորա , Լ ալլ :

ՏՊԵՆԻՆ ԳԵՐԱՆՈՒՆԱՆ, ԱՐ :

ԵՂԻՄԱՆ : ԱՐ . յՐՈՅ . յՐՈՎ . ՎՐՈՎ .  
ՎՐ . ՎՐՈՎԷ . յՐՈՎԷ . || յՐՈՒՄ , յՐ ,  
աՌյՐ . || յՐՈՒՄ . ՈՎ յՐ ԳՆԱՍԳ :

ՅՈՒՆԻՄԱՆ : ԱՐՔ . յՐՈՅ . յՐՈՎՔ .  
ՎՐՈՎՔ . ՎՐՍ . ՎՐՈՅ . յՐՈՅ .  
|| յՐՈՅ , յՐՍ , աՌյՐՍ . || 'Ի յՐՍ .  
ՈՎ յՐՔ ԼՄՔՔՔՔ ' Ի ՄԻՍ աՌՔՔ :

ՐՍՍԱՅՍԱՄ ՏՊԵՆԻՆ Ե ՈՒՆԿՆՔՍ ,  
ԻՄ , ԽՈՅ , ԽՈՎ : ՔՍ , ՔՅՅ ,  
ՔՅՈՎ , ԿԱՄ ՔՈՎ : ԻՒՐ , ԻՒՐՅ ,  
ԻՒՐՈՎ : ԻՄՔ , ԽՈՅ , ԽՈՎՔ :

ՔՅՔՔ , ՔՅՅՅ , ԿԱՄ ՔՅՅ . ՔՅՅՈՎՔ ,  
ԿԱՄ ՔՈՎՔ : ԻՒՐՔ , ԻՒՐՅՅ , ԻՒՐՈՎՔ  
Ե ԱՅԼՆ : ԻՍԿ ԿԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆԱ  
ԱՅՍ՝ ԻՆՆ , յՐ Ե ԵՐՐՐՐՐ ԳԷՄ ԸՍՍ

ԻՆՔԵՆ , ՏՊԵՆԻՆ ՈՍՊ ՊԵՆԻՆ , ՊԵՆԻՆ  
Ո՛ՐՊՈ՛ ԻՆՔՆ , ԻՆՔԵԱՆ , ԻՆՔԵԱՄԸ :  
ԻՆՔԵԱՆՔ , ԻՆՔԵԱՆՅ , ԻՆՔԵԱՄՔՔ ,  
ՎԻՆՔԵԱՄՔՔ , Ե ԱՅԼՆ :

Ե՛Ն աՍՍ ԳԻՍԵՆԻՆ , ՂԵ ԵՐԵՔԻՆ

սորաւս՝ ի-րեան, Բի-անց, իրերաց,  
 Են հազան դերանո՛ւնք. և կոչին  
 պակասականք: Արոց զպակասու  
 Թխան՝ ծանիր՝ ի ստորև ՚ի հոլով  
 մանց նոցին:

Հոլովանի Դա երանո՛ւանս, Իւրեան:

|   |          |            |
|---|----------|------------|
| Ո | Ո՛չ ունի | Իւրեանք    |
| Ո | Իւրեան   | Իւրեանց    |
| Գ | Իւրեամբ  | Իւրեամբք   |
| Ը | ՉԻւրեամբ | չԻւրեամբք  |
| Կ | Չունի    | չԻւրեանս   |
| Տ | չԻւրանէ  | չԻւրեանց   |
| Ս | յԻւրանէ  | յԻւրեանց   |
| Տ | Իւրեան   | Իւրեանց    |
| Տ |          | ցԻւրեանս   |
| Տ |          | առ Իւրեանս |
| Ն | յԻւրեան  | յԻւրեանս   |

Հոլովանի Լ՛նեպայան Դա երանո՛ւանցս՝  
 Բի-անց, իրերաց:

|   |          |          |
|---|----------|----------|
| Ո | Ո՛չ ունի | Ո՛չ ունի |
| Ս | ՍԻմեանց  | Իրերաց   |

|   |           |          |
|---|-----------|----------|
| Գ | Միմեամբք  | Իրերօք   |
| Ը | զՄիմեամբք | զԻրերօք  |
| Կ | զՄիմեանս  | զԻրեարս  |
| Ձ | զՄիմեանց  | զԻրերաց  |
| Ս | իՄիմեանց  | յԻրերաց  |
| Տ | Միմեանց   | Իրերաց   |
| Տ | ցՄիմեանս  | ցԻրեարս  |
| Տ | իՄիմեանս  | յԻրեարս  |
| Տ | առՄիմեանս | առԻրեարս |
| Տ | ըՄիմեանս  | ըԻրեարս  |
| Ն | ընՄիմեանս | իյԻրեարս |
| Ն | իՄիմեանս  | յԻրեարս  |
| Ն | առՄիմեանս | առԻրեարս |

Եւ յերիցս այսցանէ, իւրեան, միեանց, իրերաց, առաջինն է երգ դէմ: Իսկ միւս երկու անեզականքն, ըստ յարաբերականին՝ առամ դէմս կարեն առածիլ: Ոյ ասել՝ մեք միմեանց և իրերց. դուք միմեանց և իրերաց. նոքա միմեանց և իրերաց:



Տողովմունք երկնց մասնական ան  
ունանց , ո՞ն , ո՞ք , ի՞ն , և երկուց  
հարցականաց , ո՞վ , ո՞ր : Եւ միոյ  
ընդհանրականի՝ որ է , աննէտան :  
Որոց իւրաքանչիւրն՝ ի բազում  
տեղիս դերանունանաց :

Տողովմունք Մասնականիս , Ո՞ն :

Եւ զայն : Ո՞ն . ուրումն . ոմամբ .  
զումամբ . զումն . զումեմնէ . յու  
մեմնէ . || ումեմն , ցումն , առ ոմն . ||  
յումեմն : Յոգնական . Ոմանք .  
ոմանց . ոմամբք . զումամբք . զո  
մանս . զումանց . յումանց . || ոմանց ,  
ցումանս , յումանս , առ ոմանս . ||  
յումանս , ի յումանս :

Տողովմունք Մասնականիս , Ո՞ք :

Եւ զ՞ : Ոք . ուրուք . ոմամբք . զո  
մամբք . զոքք . զումեքէ . յումեքէ .  
|| ումեք , առ ոքք . || յումեք :  
Յոգնական . Ոմանք . ոմանց . ոմամբք .  
զումամբք . և այլն :

Տողովուհն Օսանախանիս, Ի Գ. :

Եւ՛ . Ի մն . Իրիք . Ի՛նիք . զի՛նիք .  
զի՛մն . զի՛մեքէ . յի՛մեքէ . ॥ Իմիք ,  
առ իմն . ॥ յի՛միք : Յ՞գ՛ . Ոմանք .  
ումանց . ոմամբք . և այլն .

Եւ՛ տես , զի սոքա ևս՝ ո՛ր , ի՛նչ ,  
կերպի՛ն ի՛նչ պակասականք են .  
զի՛ ոչ ունին յոգնականս Ը իւր  
եանց յատուկ ձևոյն . այլ վարին  
յոգնինա՛ն ո՛նին : զի երիցն ևս  
յոգնակնն այս է , ոմանք , ոմանց :  
Ո՛նին իւրին գողով , և միւսոցն  
օգնելով . Նաև՝ ո՛ն , գործիակն  
ևս ոչ ունելով , ո՛նին գործիա  
կանա՛ն վարի օպ ցուցա՛ն .

Տողովուհն Տարցախան Ընունանս ,  
Ո՛վ , Ո՛ր :

Եւ՛ . Ո՛վ . ո՛ր . ոյր . ի՛ն . զի՛ն .  
զո՛վ . զո՛ր . զու՛մի՛ն . յու՛մի՛ն .  
॥ ո՛ւմ , ցո՛վ , ցո՛ր , առ ո՛վ , առ ո՛ր : ॥  
॥ յո՛ւմ , յո՛վ , յո՛ր , առ ո՛վ , առ ո՛ր : ॥

Յօգնա՛ : Ո՛րք, կամ ո՛վք : ղյց,  
խ՛նք : զխ՛նք, զո՛յս : զո՛յց, յո՛յց :  
| ղյց, ցո՛յս, առ ո՛յս : || նո՛յս :

Եւ ծանխր, զի հարցականքս,  
ո՛վ, ո՛ր, շարակցին երբեմն ընդ  
մասնին տին, և իմիասին հօլովին :

Ո՛րքո՛ն, Ո՛վոք, կամ ո՛րք : ղյր ու  
րուք : խ՛ն խ՛նիք : զխ՛ն խ՛նիք :  
զո՛վոք, կամ զո՛րք, զուամէ՛րու մե  
քէ : յուամէ՛րու մեքէ : | ո՛ւմ ու մեք,  
ցո՛վոք, ցո՛րք, առ ո՛վոք, առ ո՛րք : ||  
յո՛ւմ ու մեք : Լ՛յս Եղախն :

Ի սկյոգնին, Ո՛րքո՛ն, Ո՛րք ոմանք,  
ո՛յց ոմանց : որո՛վք ոմամբք, կամ  
խ՛նք ոմամբք : զորո՛վք ոմամբք,  
կամ զխ՛նք ոմամբք, զո՛յս ոմանս :  
զո՛յց ոմանց : յո՛յց ոմանց : | ղյց ո  
մանց, առ ո՛յս ոմանս : || նո՛յս ոմանս :

Սոցա՝ ինչքն և զինչքն՝ իմնին է .  
 որովքն և զորովքն՝ որբին . զի ՚ի  
 կոտորան՝ նորին դնիլ յարմարին .  
 Ի սկ՝ ինչք , զինչք , անսովորք են :  
 Վ, աև՝ զոյս , զոյց , և այլ , Թէպէտ  
 դնին ՚ի կարգի հոլովման , սակայն  
 ՚ի նախնեաց անսովորք են ՚ի կիր  
 արկանիլ . որոց զտեղին ընու յա  
 ղաբերականս , ոչ , ոսկ ցուցեալ է :

Հոլովումն լ՛նդհանրայան Վշանին ,  
 ամենեւեան :

լ՛մենեքէն , կամ ամենեքին :

լ՛մենեցուն , կամ նեցունց :

լ՛մենեքումբ , կամ քումբք :

զլ՛մենեքումբ , կամ քումբք :

զլ՛մենեսէն , կամ զամենեսին :

զլ՛մենեցունց , կամ նեցուն :

յլ՛մենեցունց , կամ նեցուն :

լ՛մենեցուն , ամենեցունդ ,

ցամենեսեան , ցամենեսին ,

առ ամենեսէն , առ ամենեսին :

՚ի յլ՛մենեսեան , ՚ի յամենեսին :

ով Լ՝ Ֆենեքեան , ով ամենեքին ,  
Լ՝ յսպէս հոլովին և Թո՛ւական  
անո՛ւանքս այսոքիկ , Լ՝ րկոքեան  
կամ երկոքին , Լ՝ րկոցունց , Լ՝ ր  
կոքումբբ : զԼ՝ րկոսեան կամ  
զերկոսին : ॥ Լ՝ րեքեան կամ երե  
քին : Լ՝ րեցունց : Լ՝ րեքումբբ :  
զԼ՝ րեսեան կամ զերեսին :

Սոյնպէս՝ չորեքեան . հնգեքէն .  
վեցեքեան . եօթնեքեան . և այլն :  
Ըստ սեռականի սոցին լինին և  
անո՛ւանքս՝ քաղցր , ծանր , մանր ,  
փոքր , մինչ առ հինգերորդ կերպն  
պատկանին . որ յիշեցլէ յերես 34 .  
Ույ քաղցր քաղցու : քաղցունք  
քաղցունց : ծանր ծանու : ծա  
նունք ծանունց , և այլն :

Իսկ գործիական՝ միայն փոքրն ,  
փոքումբ , փոքումբբ : զի միւս  
այլքն՝ ուր լինին . ույ և պահանջէ  
կերպն հինգերորդ , դասք , դա  
սուց , դասուք , և այլ :

Ընթարթ Դեբանունան 131

Յազատ Յօդի, Որ է Տիեզերք  
Սասն Բանի:

Պրտի 28



օդն է փոքրիկ ինչ մասն  
բանի, որ յօդի յայլ մա  
սունս բանին և դիմաճո  
րէ՛ զնոսա: Եւ են այսօքիկ,  
...դ. ն: այս. այդ. այն: սոյն. Գրչն. հոյն:  
Լ'սցի, ( յօդի յայլ մասունս բա  
նի և դիմաճորէ զնս: ) զի այն է  
զօրութիւն յօդին, որ առադրի  
անդէմ և անորոշ հոլովական մա  
սանց՝ և դիմաճորեալ որոշէ՛ ըզ  
նս յայլոց: Օ որօրինակ՝ անունս  
այդ, ոչ օւնելով յատկութի դիմի՛  
ոչ իմացեալ լինի թէ առ ո՞ր դէմ  
վերաբերի: Եւսկ յորժմ առադրի  
նմա մի՛ ի յօդիցն, յայնժամ դի  
մաճորի՛ և յատկանայ ըստ այլ  
դիմաճոր մասանցն: Ս'գոհ՝ այրս,  
այսինքն՝ ես: Լ' յրդ, այսինքն՝

դ՛ու : Ը յրն , այսինքն՝ նա՛ . որ է  
պետրոսն , պօղոսն , կամ այլ :

Քանզի՛ « , նշանակէ զառաջին  
դէմն . Ե , զԵկեղն . ն , զԵրրորդն՝  
որպէ՛ց ցուցաւ : Իսկ այլ միւսքն՝  
զԵրրորդ դէմն միայն նշանակեն .

Բայց՝ որք սէիւ կերպաւ որին ,  
այսինքն՝ այս , սոյն , նշանակեն ըզ  
մօտաւ որն առաջին դիմին . Որպէ՛ս  
ասել , այս քար , կամ սոյն քար :  
այսինքն այն՝ որ մօտ ինձ կայ :

Եւ որք դայիւ լինին , այսինքն՝  
այդ , դոյն , նշանակեն զմօտաւ որն  
Երկրորդ դիմին : Որպէ՛ս ասել ,  
այդ քար , կամ դոյն քար . այսինքն  
այն՝ որ մօտ քեզ կայ : Իսկ այն , նոյն  
պարզապէ՛զ զԵրրորդ դէմն նշանակեն :

Ոպէ՛ս ասել , այն քար , կամ նոյն քար .  
այսինքն այն՝ որ իբացեայ է յեր  
կոցուհոցս : Ը յսպէն և դերան  
ճ՛անկքս՝ սա՛ , դա՛ , նա՛ , զորոց  
յերեսն 121 ասացաւ :

Եւ գիտելի է , զի առձին երեքն

որք են միատառք, ս, դ, ն, միշտ  
վերջադիրք լինին բառից: Ո՛րգոն՝  
այրս, այրդ, այրն:

Լ՛ն վերջին երեքն, ոոյն, դոյն, նոյն,  
նախադասիլ պատկանին: Ո՛րգոն՝  
սոյնօր, դոյնօր, նոյնօր: Պատա

հի՛ թէպտ երբեմն և վերջադիրիլ,  
ոպ յառնէ՛ նոյնէ՛. բայց ո՛չ ըստ  
ամբառի և հոլովման լինի այս.

այլ՝ ի հազիւ՛ ուրեք: Իսկ միջին  
երեքն՝ այս, այդ, այն, կարեն լինիլ  
նախադասք և վերջադասք: Ո՛պ

ասել՝ այս մարդ, կամ մարդս այս.  
Լ՛. յդ մարդ, կամ մարդդ այդ.  
Լ՛. յն մարդ, կամ մարդն այն.

Ի՛այց այսօքիկ՝ երբ վերջադիրք  
լինին՝ առանց եզատառ յօդի ոչ  
յարմարին: Ո՛րպ ո՛չ լինի ասել՝

կին այս. կին այդ. կին այն:  
Լ՛. յլ կինս այս. կինդ այդ. կինն  
այն: Ս՛արդս այս, և այլն.

Իսկ յորժամ նախադասք լինին՝  
կարեն դնիլ եզատառիւ՛ կամ ոչ:



Որգոն՝ այս կինս, կամ այս կին :

Լ՝ յդ կինդ, կամ այդ կին :

Լ՝ յն կինն, կամ այն կին :

Գիտե՛լի է և այս, զի եզատառ

յօդքս, ս, դ, յորժամ Ը բազմա

տառ յօդի դնիցին, ոչ զնոյն դէմ

նշանակեն, զոր ինքեանք նշանա

կէին. այլ հետեւին նշանակուէ

այն բազմատառ յօդին, և լինին

երրորդ դէմ: Օ յրօրինակ, յարդս՝

նշանակէ զառաջին դէմն: յարդս՝

նշանակէ զերկրորդ դէմն: Իսկ

եթէ ասիցի յարդս այս, յարդս այդ,

նշանակի երրորդ դէմն ըն նշանակէ

բազմատառ յօդիցս՝ այս, այդ :

Կանխիկ և զայս, զի եզատառ

յօդքն մինչ առադրին բառից,

բաղադրին Ը նս և միանորին :

Իսկ բազմատառքն զատապէս կը

ցին, ունցուցան : Եւ եզատա

ռից կիրառու իքն՝ պիտանագոյնք

և վայելչագոյնք են մանանանդ

ի հոլովմունս ընդուենելու թէց :

Որպէս ասել՝ բացօղս, բացօղդ,  
բացօղն: Եկեալս, եկեալդ,  
եկեալն, և այլ:

Գիտեա՛ և զայս, զի եզատառքն  
երբեմն թէպէտ դիմանոր մա  
սանց և սառադրին, բայց ոչ վս  
հարկանորուք, այլ իբրև զարդ  
իմն առ'ի յառանել յատկացու  
ցանել զգէմնն: Որչա՛ որ պա  
հեմս. որ պահեսդ. որ պահէն.  
Լ. յսինքն՝ ես որ պահեմ. դու  
որ պահես. նա՛ որ պահէ: Լ. յսպ'  
զոր մեքս կարծեմք. զոր դուքդ  
պատմէք, և այլ:

Ե՛ւ բազմատառ յօդից՝ են հե  
տևմունք երեք: Գէմ, թիւն,  
և հողով: Իսկ եզատառիցն՝  
դէմ միայն: Գէմք եզատառից  
և բազմատառից մինչև ցայժմ  
ասացան: Իսկ զթիւն և զհողով  
բազմատառիցն՝ տես 'ի հե  
տևեալսդ:

ԼՂՀԻՍԻ) ԼՂ. յս. այսր և այսորիկ:  
ԼՂ. յսու և այսուհիկ: զԼՂ. յսու և  
զայսուհիկ: զԼՂ. յս: զԼՂ. յամանէ:  
յԼՂ. յամանէ: ॥ ԼՂ. յամ, այսմիկ,  
յայս, ցայս, առ այս, ընդ այս: ॥

յԼՂ. յամ, յայսմիկ, ՚ի յայս, Քի:

ՅՊԳՆԻՍԻ) ԼՂ. յսոքիկ կամ այսք:

ԼՂ. յսոցիկ կամ այսց: ԼՂ. յսոքիւք:

զԼՂ. յսոքիւք: զԼՂ. յսոսիկ: զԼՂ. յս

ցանէ: յԼՂ. յսցանէ: ॥ ԼՂ. յսոցիկ,

ցայսոսիկ, առ այսոսիկ: ॥ յԼՂ. յսո

սիկ կամ յայսոսում: ॥ ԼՂ. յսայ հո

լովին և միւս երկուքն: ԼՂ. յդ.

այդր և այդորիկ: ԼՂ. յն. այնր և

այնորիկ, և այլն: ԼՂ. սկ' սոյն, Գոյն,

Կոյն, հոլովին ոպ գործ գործոյ:

ԼՂ. երևոց' լով Գրա', սոյնում, դոյն

ում, նոյնում: ԼՂ. երգ', ՚ի սոյնում

՚ի դոյնում, ՚ի նոյնում:

ԼՂ. արդ' մասնս այս' Յօդ' Թէ

պէտ քանակու թէ փոքրիկ ինչ

մասնէ բանի, բայց մեծ է զօրւք:

որ անդէմ մասանց դէմ շնորհէ

և որոշէ յայլոց: 137

Յ աշագս Ն, ախագրու-լեան :

Պրաչ 22



ախագիրն է վեցերորդ  
մասն բանի, որ առա-  
գրի անուան և այլ հո-  
լովական մասանց բանին, և նշա-  
նակու-թի հնչ արտաքին յաւելու-  
'ի նս. Որպէս ասել, ի վր երկրի .  
վս պահելոյ . առաջի նր, և այլ .  
Լսացի (նշանակու-թի հնչ արտա-  
քին յաւելու-թի նս) զի մինչ ասի՝  
ի վերայ երկրի, ոչ եթէ իւր զուտ  
ներքին նշանակու-թի երկր բառիս  
աւելի հնչ լինի . այլ ցուցանի  
գու-թին կամ իրակիլին ի վր նր .  
այսպէս և այլքն :

Ն նախագիրքս՝ զանազան նշա-  
նակու-թիւնս և զանազան ան-  
ուանս ունին, վս զի՝

Ո մանք տեղականք են . որգոհ,  
ի վերայ . ի վերոյ . ի ներքոյ .

արտաքոյ . դէպ . հանդէպ . շուրջ .  
յանդիման . մօտ . մերձ . հուպ .  
առընթեր . առաջի . մինչ . մինչև .  
զառիվեր . զառիվայր . անդրքան .  
իվերքան . իվերկոյս . իվայրկոյս .  
և այլ :

Ո մանք դասականք են . հիգոն ,  
առաջի . զկնի . յետ . յետքան .  
յետոյքան . նախքան . յանջքան .  
և այլ :

Ո մանք գերադրակոնք են . որպան՝  
գերքան . իվերքան . անդրքան .  
առանելքան , և այլ :

Ո մանք պատճառակոնք են . հիպան՝  
վս . սակս . յաղադս . աղադան .

Ո մանք նմանականք են . որկն ,  
ըստ . որպէս . իբր . իբրև . զօրէն .  
և այլ :

Ո մանք բացատականք են . հիկէն ,  
բաց . զատ . հեռի . մեկուսի . և'' :

Ո մանք յարակցականք են . որպայ՝  
հետ . զհետ . հանդերձ :

Ո մանք փոխարինկոնք են . հիպայ՝

փոխան . փոխանակ . փոխարէն .  
Ոմանք ծածկականք են . ուղակի ,  
գաղտ . ղանխուլ . ծածուկ :

Ոմանք բացբարձականք են . և  
են սոքա , Թարց , առանց :

Ոմէ է բաղդատական . որ է , սն .

Ոմէ է Ըդիմական . որ է , ըրրէ :

Եւ ոմն է միջնորդական . որ է ,  
ի յիսն :

Եւ նախդիրքս այսոքիկ՝ զանա  
զան հոլովս պահանջեն ՚ի շա  
րադրու թեան : վս զի

Ոմանք խնդրեն զսեռականն .

Սրգոն՝ ՚ի վս լերանց . ՚ի վերոյ  
երկնից . ՚ի ներքոյ լուսնոյ . ար

տաքոյ խցին . զառիվեր լերինն .

զառիվայր նորին . ի վերկոյս բըլ

րոյն . ի վայրկոյս այգւոյն . առաջի

բեմին . զկնի գալոյն . յետ ամե

նեցուն . վս աղաչելոյ . սակս սի

րելեաց . հետ բանասիրաց . ըլ

հետ ընկերաց . փոխան պարգևի .

փոխանակ սիրոյ . փոխարէն վար

204 • առանց նենգութեան :

Ի յեան աղօթից և պահոց ստանայ  
մարդ զշնորհս :

Ո մանք խնդրեն զվերջահոլով  
տրականն : Որչա՞ն, հանդէպ նստե  
լոց • յանդիման գիտնոց • առ ըն  
թեր նմա • ըստ բանի ձերում •

զօրէն անասնոց • Ըդէ՞մ օրինոց :

Ո մանք խնդրեն զնախդրիւ՛ տը  
րականն : Որչե՞ն, դէպ ՚ի պաղէս  
տին • մօտ ՚ի տաճարն • մերձ ՚ի մա  
տուռն • հուպ ՚ի պարիսպն • մինչ

՚ի ծովեզրն • մինչև ՚ի դուռն :

Ո մանք խնդրեն զհայցականն :

Որպա՞յ, որպէս զանասուռն • իբր  
զքնամեռ • իբրև զանզգայս :

Նաև՝ նախդիրս՝ չան, և որք օղ  
վաւ՝ ձեանան, հայցկնաւ՝ շարա  
դրին : Որբար՝ հզօր քան զառիւծ •

անդր քան զծովն • իվեր քան զեր

կինս • գեր քան զմիտս, և այլ :

Ո մանք խնդրեն զսկզբնականն :

Որդե՞ս, բաց ՚ի նոցանէ • զատ ՚ի

սոցանէ . Տեռի 'ի տանէ . մեկուսի  
'ի ձէնջ : գաղտ 'ի յամբոխէն .  
զանխուլ 'ի հօրէն . ծածուկ 'ի  
մօրէն : և նմանք :

Մ 'ի ոմն նախդիր՝ խնդրէ զգոր  
ծիականն : Որգո՞ն , եկն յս  
հանդերձ աշակերտօքն :

Լ ճ մինն խնդրէ զարտագոյնն .  
նստան շուրջ զնովա՛ն :

Լ ճ այսպս պարտիս ճանաչել  
զիւրաքանչիւր նախդիրսն ,  
թէ զոր հոլով պահանջեն 'ի շա  
րադրուէ , ըստօրինակի եղեւոյց  
մինչև ցաստ :

Լ այց ծանիր , զի նախդիրքս՝  
իվերոյ , իներքոյ , արտաքոյ ,  
կարեն առնուլ և զհայցականն ,  
բաղդատական նախդրի՛ւս՝ քան :  
Որգո՞ն , իվերոյ երկնից , կամ քան  
զերկինս : Իներքոյ լուսնոյն ,  
կամ քան զլուսինն : Լ արտաքոյ  
խցին , կամ քան զխուցն :



Վախդիրքս՝ յօր, Ռէք, հոգ, կա  
րեն առնուլ և զվերջահարկ  
տրականն ը վայելման տեղւոյն:  
որդոն, մօտ ՚ի նա, կամ նմա: մերձ  
՚ի ձորն, կամ ձորոյն: հուպ ՚ի  
այդին, կամ այգւոյն:

Վախդիրքս՝ ըստ, կայ եղեալ ու  
րեք զուղղականն առեալ: Ո՛րդոն  
ԼԹԷ իցէ լեալ ը չափ: 1 ի՞րն 7:  
Ո՛չխար ըստ երդ: Ե՛ւր 12:

Վախդիրքս՝ որդէս, ըստ մեծի մա  
սին Թէպտ զհայցկնն խնդրէ,  
բայց ըստ բերման շարդրուե՛  
կարէ և զայլ հոլովսն առնուլ:  
Ո՛րդէն, Ուղղական, մտցէ որպէս  
ջուր ՚ի փոր նր: Ս՛եկան, մարդոյ  
որպէս խոտոյ են ա՛նուրք իւր:  
Գ՛որ, ուն զինու՝ հաճուք քով:  
Սկզ՛, զարթեա՛ն ուն ՚ի քնոյ տր:  
Տրա՛, ժողովեաց որպէս ՚ի տիկ:  
Ներ՛, անդ երկունք որպէս ՚ի  
ծննդեան, և այլ:

Ր՛ստայսմ է և նախդիրքս՝ իբրև:

Իբրև տնանկ: Իբրև տրտմեալք:

Իբրև ծովու և խռովութեան:

Իբրև իշխանուք, և այլ:

Լ յսպիսիք և այլք գրտանին  
այլևայլ հողովս առնողք:

Վախդիրս՝ առաջի, եկաց առաջի  
իշխանին, է՛ տեղական: Լ՝ առջի  
նորա երթայր, է՛ դասական:

Յետին կերպս՝ կայ և հայցակա  
նա՛ն եդեալ: երթայր յս՝ առաջի  
քան զնս: Տար 10. 32:

Վախդիրքս՝ գնչ, գնչև, որք են  
տեղականք, լինին ուրեք ժամա  
նակականք: Ուն ասել, մինչ՝ կամ  
մինչև՝ ի գալուստ տն մերոյ:

Լ՝ Կրտան, ուր զճեռա՛նորութի  
ցուցանէ, է՛ տեղական: և ուր  
զգերազանցութի նշանակէ, է՛ գե  
րադրական: Ուն ասել՝ է՛ այլինչ  
կղզի անդրքան զբեռինոս:

Լ՝ Ծ է անդրք զհասումն մտաց:

Լ յսպիսիք և այլք գտանին,  
այլևայլ նշանակութիս ունողք:

**Ս**անիր և ս, զի նախդիրս՝ աշ-  
 գան, թէպէտ միշտ ստորագիր է  
 և ոչ նախդիր, ( ուն քնոյ աղագան-  
 սիրոյ աղագան, և այլ ) սակայն  
 ոչ անկանի այնու ՚ի նախդիր գո-  
 լոյն • զի և այլ նախդիրք՝ լինին  
 ուրեք ստորագիրք և ոչ անկա-  
 նին ՚ի նախդիր գոլոյ • Ուն ասել  
 վս իմ են չարիքս, կամ, իմ վս են •  
**Լ** յապէս, առաջի քո • կամ՝ քո  
 առաջի • Հանդերձ զօրօք • կամ  
 զօրօք հանդերձ, և այլ •

**Ս**ն բաց յայսկերպ նախագրու-  
 թեանց՝ են և այլ նախդիրք,  
 տառ, և վանկ, որք զՏոլովան կեր-  
 պանորեն և կոչին հոլովական  
 նախդիրք • Որք են, ի, յ, զ, ց,  
 առ, ըն, ընդ, ուն որք եդան ՚ի հո-  
 լովմունս անունանց և այլոց •

**Բ**այց նախդիրքս, առ, բնդ, բա-  
 զում զանազան նշանակու թիս  
 ունին • զորոց դիցուք սա-  
 կան ինչ •

Վախդիրս այս՝ առ, ըստ մեծի մա  
սին՝ շինէ զտրականն։ Որպէս  
ասել՝ գնաց առ կայսրն։ Գիմեաց  
առ ի շխանան, և այլ։ Բայց և սոյն  
կերպիւն՝ ՚ի բազում ուրեք ներ  
գոյական լինի և ՚ի բայէն ճնաչի  
զորօրինակ, գնաց առ յեսու, է՛ տը  
րական։ մնաց առ յեսու, է՛ ներ  
գոյական։ Օրպիսիս լրապէս  
՚ի հոլով առ ուրեք ուսցիս։

Վարձեալ ՚ի բազում ուրեք առ  
սեռականն եդեալ՝ ներգոյական  
շինէ։ Որպէս, դու մինչ կայիր առ  
նաւին, ես կայի անդ առ վիմին։  
որ է ասել, ՚ի նաւին, ՚ի վիմին։

Լէ՛ երբեմն այսպիսի դրութք՝  
զմերձ լինիլն նշանակէ։ Ոպ ասի,  
պետրոս նստէր առ խարուկին և  
ջեռնայր։ որ է՛ մերձ խարուկին։  
Իսկ երբեմն նշանակէ՛ զհտ։ Ինծ՝  
առ ուրեք մակաղեսցի։ Եւ 11. 6.

Իբրու՛ զհետ ուրու։

Երբեմն նշանակէ՛ զանն։ առ նա

Խանձու մասնեցին զնա՝ Տար 15. 10  
 որ է վս նախանձու։ Ըստայսմ է  
 և այս, առ ՚ի չգոյէ Տիւթոյ. 2-  
 8. 6. որ է վս ոչ գոլոյ։ Ընթկա  
 տարելոյ ամ գրելոց։ վս կտրելոյ  
 Ընթկիւղին գողային։ այսինքն  
 յերկիւղէն, կամ վս երկիւղին։  
 Ընթուժի գործէիր։ Եսայի 57.

վասն ուժեղ լինելոյդ։

Իսկ առ գործիականն եղեալ,  
 երբեմն զմերձ լինիլն ցուցանէ։  
 կայր յօճաննէս քզմեալ առ յիւ՛.  
 Իսկ երբեմն ներգոյական լինի՝  
 որիկն, առ ճանապարհաւն։ Տար 20  
 առ ծովեղերբն 13. Երբեմն ըզ  
 շուրջ լինիլն ցուցանէ. ոպ ասել՝  
 նստան առ սեղանովն։ Իսկ՝ նքս  
 տեալ կային առ ծառովն, է՛ ՚ի  
 ներքոյ ծառոյն, կամ մերձ։

Երբեմն զյատուկ ժամանակ մի  
 նշանակէ։ առ եղիսէիւ մարդա  
 րէիւ։ այսինքն՝ յաւուրս եղիսէի  
 մարդարէին։ Ենի և աւելորդ։

Վս ճոխ բերելոյ զշարագրածն :  
առ ՚ի հօրէն լուսոյ : Ար նոյն է ,  
՚ի հօրէն լուսոյ :

Լ յսպէս և նախդիրս՝ ըդ , զանա  
զան նշանակուիս ունի : Աս զի  
սա՛ ևս ըստ մեծի մասին շինէ ըզ  
տրականն : Յրո՛ւ եսցի զա՛ակ նց  
Ը հեթանոսս : ո՛ր է՝ ՚ի հեթանոսս :

Բ և եռեա՛ ընդ երկիւղ քո զմար  
մին իմ : ո՛ր է՝ յերկիւղ քո :

Ի սկ երբեմն շինէ զնեղօրոյնն :

Խ օսցայ ՚ի դիշերի Ը սրտի իմում :

Տրանջէին ընդ միտս իւրեանց :

Ար է՝ ՚ի սրտի , ըն միտս :

Լ Կն ընդական , ատամն Ը ատայ  
ման , զփոխարէնն նշանակէ :

Ս ՚ի՛ հոգայք ընդ մարմնոյ , է Վս

մարմնոյ : Աջ է մեզ մարտ Ը մար

մնոյ և ընդ արեան , է ընդ դէմ

մարմնոյ : Գայլ ընդ գառին ճա

րակեսցի Ես 11 . 6 . Բնդ նմա և

հաց ոչ ուտէի , Լ շանակեն զհո :

Բնդիս եթէ ոք մտցէ : ո՛ր է՝ ինև .

խամով: Աստայսմ է, որ ոչ մտանէ

ընդ դուռն 'ի դաւիթ ոչխարաց:

որ է 'ի դռնէն. կամ դռնովն:

Առք կամին ընդ արդարու ի իմ:

որ է զարդարութիւն իմ:

Ա իՏ մեծ է ընդ մեզ և լ քեզ:

'ի մեջ մեր և քո: Անդ թշնամիս

ուռնէր զիս: Թշնամի Տմբէր զիս:

Ար լինի և՛ առի՛ն. առ թշնամիս

ուռնէր զիս: Աստայսց է՛ ընդ ա

նորէնս համարեցա՛ն: Ես 53:

Անդ ասել բանին՝ ել դէն:

որ է՛ իսկոյն 'ի յասելն:

Ղանի և ա՛նելորդ՝ առ 'ի զարդ.

հնազանդ արար զժողովուրդս

ընդ մեզ. որ է մեզ: Աստայսմ է՛

ընդ ոստնուլ. որ է ոստնուլ:

Իսկ առ գործիականն եդեալ,

ըստ մեծի մասին նշանակէ զգոյն

'իներբոյ: Ա՛ջ լուցանեն զճրագ

և դնեն լ գրուանա՛ն, այսինս, 'իներբոյ գրուանին: Այց կարէ

վարիլ և այլ զանազան նշանակւթ

Ը գործ ի կնին, ուն զնախդիրս՝ առ .

Սակայն այսքան ինչ եղելովքս,  
կարես և զայլ նշանակութիւնս  
առին և ընդին ճանաչել :

Ի սկ յետ երկու կերպ նախադրու  
թէցս՝ են և այլ նախամասունք  
բառից, որք կոչին բաղադրական  
նախդիրք: զի ընդորում և կցին՝  
բաղադրին Ը նմա և միանորին :

Որք և ոչ միայն ընդ անունն,  
այլ և ընդ բայի՝ բաղադրին :

Եւ են սորին: ան . առ . ար . բառ .  
փառ . շար . յար . շար : պար . բալ : համ . հոմ .  
գեր . վեր : դեր . փոխ : ներ . մակ : և այլ :

Եւ բաղադրին այսոն . անզգայ .  
ապերախտ . տգէտ . բաղադրել .  
փաղառուի . շողկույ : յարակցել .  
շարադրել : և այլն :

Ը որդ՝ երեք եղեն տեսակք նա  
խադրութեց . այսինքն, զատական,  
հոլովական, բաղադրական :

Օ առական այնորիկ են, որք յա  
ռաջագոյն անցան զանազան նշա



նակուք. տեղական, դսկն, և այլն.

Եւ կոչեցան զատականք, զի ոչ  
բաղադրին ընդ բառին միաւո-  
րուք. այլ զատակի՛ կցին ընդ նս  
զանազան հոլովառութիւն ըստ ո-  
րում ցուցաւ, իչերայ երկրի,  
իչերայ երկնից, և այլն:

Ի սկ նախդիրքս՝ առ, ընդ, յերկց  
տեսակացն ևս մասն օւնին. զի  
են հոլովականք և զատականք.  
և լինին ուրեք և բաղադրակնք:

Ստացսց և այլ նախդիրք՝ լինին  
ուրեք զատականք, ուրեք բաղա-  
դրականք: Որք են, բայ. ըստ. գեր.  
ենթ. ենթ. մայ. ընդդէմ. և այլ: Ո՛րգոն՝  
բաց՝ իմէնջ. բացատրել || ըստ դը-  
րոյն. ըստանձնել || գեր քան ըզ-  
միտս. գերիվերոյ | ենթ անձին.  
ենթակայ || ներսրտի. ներածել ||  
մակամայոյ. մակածել || ընդդէմ  
մեղաց. ընդդիմամարտ. և նմանք:

Ընարս Եւ տխարութեան:

Յաշագո Մախֆայի:

Պրակ 23



Մակբայնէ եօթներորդ  
մասն բանի . որ առա  
դրի բայից և բայապէս  
ընդունելութեանց . և նշանա  
կութի ինչ արտաքին յանելու  
նոցա որպէս նախդիրքն՝ անունանց .  
Սրգոն , քս փրկիչն մեր այսօր խա  
ջեցան . աստէն թաղեցան , և այլ  
լքն վասն այն կոչին մակբայք ,  
զի որպէս նախդիրն նախադրի  
անունան , սոյնպէս և մակբայն  
մակադրի բայից և բայապէս ըն  
դունելութեց ըստորում՝ ի վեր  
ասացան . Սրպ մակբայս՝ այսօր ,  
եդան առ բայն խաչեցան , և յատ  
կացոյց զժամանակն նորին : և  
միւսն եդան առ թաղեցան և  
եցոյց զտեղին : Եւ նշանակու  
թիք մակբայից՝ են յոյժ քզումք

Լ զանազանք : Որք շարակարգե  
ցան ըստ այսմ կարգի :

Ս ամանակահան ) այսօր • այժմ • յոր  
ժամ • յայնժամ • երբեմն • մերժ •  
միշտ • հ • նապազ • յամենայն ժամ •  
տակաւին • մինչ • մինչև • մինչքն •  
մի • չդեռ • մինչև յերբ • քն • քնևս •  
յաւիտեան , և այլ :

Ս ամանակահան և դասական ) նախ •  
ապա • յապայ • յառաջ • յետոյ •  
յետայնրկ • սոյնհետայն • զսոյնհե  
տայն • այսուհետև • այնուհետև •  
յայսմհետէ , և այլ :

Տ եղական ) աստ • անդ • այսր • անդր •  
աստի • անտի • իվեր • իվայր • ՚ի  
ներքս • արտաքս • ուրեք • ուրու  
րեք • ուրեքուրեք • ոչ ուրեք •  
ոչ ուստեք • իվերկոյս • իվայրկոյս •  
մինչևցվեր • յետս • յետս յետս ,  
և այլք :

Ք անահական ) որչափ • որքան •  
այնչափ • այնքան • միանդամ • եր  
կիցս • երկուանդամ • քանիցս •

քանիցս անդմ. քանիմի. սակաւմի.  
 փոքրմի. փոքրինչ. սակաւ ինչ.  
 սակաւ իկ ինչ. դոյն ինչ, և այլ:  
 (արյախան) էր. ընդէր. վս էր.  
 զմէր. հիմ. զի. զխարդ. որս.  
 վս որ. ոյր աղագաւ, և այլ:  
 (հոհանրախան) համօրէն. բովան  
 դակ. իմիասին. միահաղոյն. միա  
 համուռ. առհասարակ. միանգա  
 մայն. միաբան, և այլ:  
 (արոյնախան) ուրոյն ուրոյն. որիչ  
 որիչ. հեռի հեռի. զատ զատ.  
 ջոկ ջոկ. դաս դաս. երամ երամ.  
 մի մի. երկու երկու, և այլ:  
 (աանջնախան) միակի. միայնակ.  
 միայն. և եթ. միայն և եթ. առան  
 ձին. ինքն ինքեան. եզակի. որո  
 շակի, և այլ:  
 (ապախան) իբաց. իբացեայ.  
 իբացէ. բացէ իբաց. բցատ. իզատ.  
 հեռի. մեկուսի, և այլ:  
 (այտախան) յայտնի. յայտնապէս.  
 լուիլու. հմրձկ. յայտյանդ իման:

**Օ** ծխական) ծածուկ • իծածուկ •  
գաղտ • գաղտնի • իգաղտնիս •  
զանխուլ • լուռ • լուելեայն • անմը  
ռունչ • անշուշտ • Թաքթագուր •  
գաղտագողի , և այլ :

**Յ** ամբական) յամբ • հաղին • հան  
դարտ • բռանց • մեղմ • Թոյլ Թոյլ •  
անագուն • հազին երբեք • քիչ քիչ •  
փոքր փոքր • սակա՛ սակա՛ •  
սակաս՛ առ սակա՛ , և այլ :

**Լ** բազական) վաղ • վաղվաղ • վաղվա  
ղակի • փոյթ • փութով • փութա  
պէս • փոյթընդփոյթ • ըշտապ •  
ըշտապով • շուտ • շուտշուտ • շու  
տով • արագ • արագ արագ • ստէպ •  
ստէպ ստէպ , և այլ :

**Յ** յծ արբական) յոյժ փութով •  
կարի փութով • յոյժ ճեպով •  
կարի ճեպով • յոյժ շտապով • կարի  
շտապով • յոյժ վաղվաղակի , և "

**Ի** սկոնական) իսկոյն • առժամայն •  
նոյնժամայն • նոյնկէտայն • յան  
կարծակի • ի քթթեւական , և այլ :

**Ս**ասորիական) սասորիկ, յոյժ, կարի  
կարի յոյժ, յոյժ յոյժ, առանել,  
առանել ևս, ևս քան զևս, եօթն  
պատիկ, և այլ:

**Ի**սպասական) իսպառ, բնան, բնա  
նին, մինչ իսպառ, սպառսպուռ,  
ամենևին, միրստմիոջէ, և այլ:

**Լ**իբանական) արդեօք, միարդեօք  
գուցէ արդեօք, թերևօ, թե  
րևս արդեօք, լինի թէ, գուցէ,  
գուցէ թէ, գուցէ երբէք, և":

**Ճ**անասական) ճշմարտիւ, ճշմար  
տապէս, ստուգիւ, ստուգապէս,  
ճշմարտու թեամբ, ստուգու թբ,  
հանաստեան, և այլ:

**Ն**ասպական) ամէն, ամէն ամէն,  
իսկ, իսկև իսկ, արդարև, հաստա  
տու թեամբ, և այլ:

**Ռ**այասական) ոջ, ոջևս, ոջ ինիք,  
ոջ միով ինիք, ոջ երբէք, ոջ բը  
նան, ոջ բնան երբէք, և այլ:

**Մ**րգելական) մի, մի ևս, մի երբէք,  
մի ինիք, մի և մի ինիք, և այլ:

Վ (մանական) ուն, այսպէս, այնպէս,  
նոյնպէս, սոյնպէս, նմանապէս,  
սոյն գ ու նակ, նոյն գ ու նակ, և՛:

Լ (նմանական) ո՛չ այսու, ո՛չ այնու,  
ոչ այդու, ո՛չ նոյնպէս, այլապէս,  
այլաբար, և այլ:

Յ (ուրախական) ահա՛, ահա՛նասիկ,  
ահա՛նողիկ, ահա՛ննիկ, ա՛նասիկ,  
ա՛նողիկ, ա՛նանիկ, և այլ:

Կ (բնական) անդրէն, կրկին, վերըս  
տին, դարձ, կրկին անգամ,  
միւսանգամ, և այլ:

Խ (ստորական) իզուր, ինանիր, Ը ու  
նայն, ընդվայր, վայրապար,  
տարապարտ, տարապարտուց, տա  
րապարհակ, վարկապարտի, և՛

Ր (զայական) երանի թէ, օշ թէ,  
մարտան թէ, ո՛ւրէր թէ, ո՛ւր լի  
նէր թէ: Ո՛րհո, երանի թէ յաջո  
ղեալ էին ինձ ճանապարհք իմ:

Օշ թէ միայն զմի օր բարուք կե  
ցեալ լինէի: Մարտան թէ ճանա  
ջիցեմ զչափն իմ, և այլ:

Եւ գիտելի է, զի մակբայից զ  
մանք նախատիպք են, ոմանք  
ածանցեալք: Եւ ածանցելոցն  
ոմանք ՚ի մակբայից ածանցին,  
ոմանք յայլ մասանց: Եւ եզերք  
նոցին գլխաւորք՝ են այսոքիկ.

բար, պէս, օրէն, բէն, վար, են, ին, ովին,  
ի, իցս, ալի, ահօր, ուսար, յի, այն, ոյն, և"

Որգոն, ծածկաբար ասաց: յայտ  
նանյ ծանոյց: մայրօրէն սիրեաց:  
Տայերէն գրեաց: տաճկեվար մեկ  
նեաց: Ես ինձէն գիտեմ: դու  
ինքնին եկիր: բնաւին բարձաւ:  
գլխովին կորեաւ: յայտնի իմա  
ցոյց: երկիցս էզարկ: շեշտակի  
գնաց: անդանօր մեռաւ: ՚ի վե  
րուստ գոչեաց: բռնցի էհար:  
գիշերայն ջո՛ւեաց: կենդանւոյն  
կորեաւ: և նմանք:

Եւ ՚ի սոցանէ, բար, պէս, օրէն,  
զբազում անունանս մակբայա  
ցուցանեն, մանաւանդ զմակա  
դրականսն: Եւ ոչ միայն զան



ո՛ւանս , այլ և զայլ մասուռնս :  
Լճ՛ն Թո՛ւի Թէ՛ վերջինս՝ օրէն ,  
սակա՛ն ՚ի կիր արկանի քան ըզ  
միւսսն : Լճ՛ն են այսոքիկ որպի  
սականք . զի ըստ բազմուէ բա  
ռից զորս մակբայացուցանեն ,  
զբազում որպիսուիս իրակուէց  
նշանակեն : որպէս ծածկաբար ,  
յայտնաբար , և այլ : Արե՛ն և  
այլք կոչիլ որպիսականք : որպէս  
այսոքիկ , ուղղակի ձգեաց . գիշե  
րայն գնաց . աքացի էջար . ողջոյն  
կիզա՛ն . բարձ՛ոք ասաց . չարձ՛ոք  
ուսոյց , և այլ : Լճ՛ն այնոքիկ որք  
ի գերանո՛ւանց ածանցին , անձ  
նական մակբայք կոչեսցին : զի  
իվր՛ որոշեալ գիմաց առադրին .  
ինձէն , քեզէն , և այլ : Լճ՛ն վերջս՝  
րէն , երբ ասի՛ հայերէն , յունա  
րէն , վրացերէն , և այլ՝ ցեղական  
մակբայ կոչեսցի . վասն զլեզուս  
ազգաց նշանակելոյ : Աստայսմ է  
և վարն : որպէս ասի՛ հայեվար ,

արպեվար, տաճկեվար, և այլ:  
Իսկ իյս՝ քանակական է. և ունի  
զզօրութիւն մասնկանս՝ անգամ:  
զի նոյն է ասել, երիցս է հար,  
կամ երեք անգամ. և թէպէտ  
դնին ուրեք երկուքն իմիասին,  
երիցս անգամ, բայց նոյն է նշա  
նակութիւնն և ոչ ակելի:

Եւ նշանակութի այլոց եղերաց՝  
յայտ է քննողաց՝ ուն՝ գիշերայն՝  
է ծածկական: արմատաքի իսպա  
ռական, և այլն:

Եւ բազում մակադրական ան  
ունանք, թէ ածանցին և թէ ոչ  
լինին որպիսական մակբայք:

Ուն ասել, համարձակաբար ասց,  
կամ համարձակ: ծածկաբար իս  
սեցան, կամ ծածուկ. և այլք:

Որոց թէպէտ մի և նոյն է նշանա  
կութիւն, բայց ուրեք նախատիպն  
համեղ բերէ զբանն, և ուրեք  
ածանցեայն: Եւ զայսպիսի մա  
կադրական անունանսն՝ պարտիս

Ճանաչել թէ ուր անուանան ,  
և ուր մակբայանան : Յորժամ  
դնին վս որպիսուէ անուանց ,  
են մակադրին անուանք : Արգ  
լայն և համարձակ ճանապարհ ,  
ածէ զՏետևօղոն իւր ՚ի դժոխս :  
Ծածուկ խորհուրդն այ՛ ՚ի հրեշ  
տակաց ևս անգիտելի է :

Եւ յորժամ դնին վս որպիսու  
թեան բայից , լինին մակբայք :  
համարձակ ասաց , ծածուկ խօ  
սեցան , և այլն :

Լ. յսպէս և մակբայք ոմանք՝  
երբեմն անուանապէս վարին :

Ս'բն , որքան անուրբդ անցլ են՝  
այնքան կեանքդ մեռեալ են :

Եւ լինին մակբայք մինչ դնին  
այսպէս , որքան համեստանաս ,  
այնքան ազնուանաս : Լ. յսպէս ,  
փոքրինչ խմոր՝ զամ զանգու՛ծն  
խմորէ : այս՝ անոան : փոքրինչ նիստ  
և ապա՛ գնա , այս՝ մակբայ : Իւարձլ  
միայնակ որդի՛ առանել սիրի :

միայնակ նստէր 'ի խցի իւրում :  
Ղարձի՛ Տանդարտ բնութիւն ,  
'ի Տանգստեան կեայ : Տանդարտ  
ընթացէք և մի՛ ըշտապիք : այսպէ  
և զայլն իմա :

Ա՛յ մակբայք որք երբեմն ան  
